

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2024Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ1

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....5

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....9

 3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ 12

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ15

5. ԱՄՓՈՓՈՒՄ17

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համաշխարհային տնտեսությունը փորձում է հնարավորինս «հարմարվել» գլոբալ անկայունությանն ու զարգացման գլխավոր մարտահրավերներին, և այդ պարագայում հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճը 2024 թվականի առաջին կիսամյակում գտնվել է դրական տիրույթում: Միաժամանակ, զսպող դրամավարկային քաղաքականության դիրքի պահպանման պայմաններում այդ երկրներում (բացառությամբ՝ ՌԴ-ի) նկատվել է գնաճի կայունացում:

Ինչպես նախկինում բազմիցս նշվել էր, լրջագույն գլոբալ մարտահրավերներից մեկը՝ ռուս-ուկրաինական զինված հակամարտությունը, ի տարբերություն հիմնական գործընկեր երկրների, ՀՀ տնտեսության վրա բարենպաստ է ներգործել, քանի որ դրա արդյունքում ի հայտ եկած արտաձին գործոնների դրական ազդեցությունը գերազանցել է բացասականներին: Դրա շնորհիվ ՀՀ-ում վերջին երկուսուկես տարիներին արձանագրվում է տնտեսական բարձր ակտիվություն: 2024 թվականը ևս սկսվել է բարձր տնտեսական ակտիվությամբ՝ իր վրա կրելով ոսկերչական արտադրատեսակների վերամշակման կտրուկ աճի և, որոշ չափով, բռնի տեղահանված արցախցիների սպառման և տնտեսական գործունեության ազդեցությունները:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ բարենպաստ արտաձին գործոնների ազդեցությունը գնալով թուլանում է: Պատահական չէ, որ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՅ)՝ 2024թ. փետրվարին արձանագրված 16.4% առավելագույն մեծությունը հետագա ամիսներին նվազել է և հունիսին կազմել 7.1%: Կուտակային ՏԱՅ-ը ևս աստիճանաբար դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: Առաջին կիսամյակի ՏԱՅ-ը 10.4% է (առաջին եռամսյակում այն 14.3% էր)՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության, առևտրի և ծառայությունների աճով:

2024 թվականի առաջին կիսամյակում *արդյունաբերության* ճյուղում շարունակել է գրանցվել բարձր՝ 18.2%, թողարկման աճ՝ հիմնականում պայմանավորված մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 18.2 տոկոսային կետ): Մինչդեռ, «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ենթաճյուղը շարունակել է նվազել՝ հակազդելով արդյունաբերության ճյուղի աճին (բացասական նպաստումը՝ 1.8 տոկոսային կետ): Ի դեպ, արդյունաբերության՝ դեռևս նախորդ տարվա նոյեմբերից սկիզբ առած բարձր աճի տեմպերն ապրիլից սկսել են կտրուկ դանդաղել՝ հիմնականում պայմանավորված հիմնային մետաղների արտադրության (վերջին ամիսների ոսկերչական գործունեությունը սկսել է ներկայացվել «հիմնային մետաղների արտադրություն» տողով) աճի տեմպի նվազմամբ:

Մշակող արդյունաբերության աճն առաջին կիսամյակում (այդ թվում՝ նաև 2024թ. առաջին եռամսյակում) հիմնականում պայմանավորված է եղել ոսկերչական արտադրատեսակների արտադրության նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճով: Ինչպես նշվեց, ապրիլից արձանագրվում է մշակող արդյունաբերության աճի տեմպերի կտրուկ անկում, սակայն, չնայած դրան, տարվա առաջին երեք ամիսների բարձր աճի տեմպերի հաշվին, տարեսկզբից մինչև տվյալ ամիսը ներառող կուտակային աճի տեմպը մնում է բավական բարձր: Այնուամենայնիվ, չափազանց մտահոգիչ ազդակ է այն, որ երկրորդ եռամսյակում յուրաքանչյուր ամսվա կուտակային աճի ցուցանիշը նախորդ ամսվա ցուցանիշից ավելի ցածր է:

Հարկ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ մշակող արդյունաբերության՝ ՀՀ տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք ենթաճյուղերում ամիսներ շարունակ անկում է արձանագրվում: Մասնավորապես, 2024թ. առաջին կիսամյակի արդյունքներով սննդամթերքի արտադրությունում անկումը 1.5% է, հագուստի արտադրությունում՝ 4.1%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունում՝ 17.9% և այլն: Այսինքն՝ մշակող արդյունաբերության «համակարգաստեղծ» ենթաճյուղերի արտադրությունը շարունակաբար նվազում է, սակայն ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճը (չնայած կտրուկ նվազած, սակայն դեռևս համեմատաբար բարձր) կարողացել է «չեզոքացնել» այդ անկման ազդեցությունը մշակող արդյունաբերության վրա՝ որոշ իմաստով «քողարկելով» արդյունաբերության կառուցվածքի վատթարացման լուրջ սպառնալիքները:

«Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» ճյուղում համախառն արտադրանքի աճը 4.3% է և հիմնականում պայմանավորված է բուսաբուծության աճով (նպաստումը՝ 3.6 տոկոսային կետ):

Շինարարության ճյուղում արձանագրվել է 15.7% աճ՝ հիմնականում պայմանավորված բնակչության և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 11.5 և 9.0 տոկոսային կետ): Կազմակերպությունների միջոցներով իրականացվող շինարարության ծավալները նվազել են՝ էականորեն հակազդելով շինարարության աճին (բացասական նպաստումը՝ 3.8 տոկոսային կետ): Նվազումն առավելապես պայմանավորված է ներքին ներդրողների միջոցներով ֆինանսավորվող շինարարության նվազմամբ, թեև հարկ է նշել, որ նվազել են նաև օտարերկրյա ներդրողների միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալները:

Ծառայությունների 4.4% աճը հիմնականում պայմանավորված է ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով (նպաստումը՝ 5.1 տոկոսային կետ), որն իր հերթին պայմանավորված է եղել բանկերի գործունեության աճով: Ճյուղի աճի վրա հիմնականում բացասաբար է ազդել «տրանսպորտ» և «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղերի նվազումը (նպաստումները՝ համապատասխանաբար՝ -2.2 և -1.8 տոկոսային կետ): «Տրանսպորտ» ենթաճյուղի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել օդային տրանսպորտով մատուցված ծառայությունների նվազմամբ: «Տեղեկատվություն և կապ» ենթաճյուղում անկման հիմնական պատճառը SS ենթաճյուղում մատուցված ծառայությունների նվազումն է:

Առևտրի ոլորտում արձանագրվել է 22.9% աճ, որը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 19.8 տոկոսային կետ): Վերջինիս բարձր աճը պայմանավորված է տնտեսության մյուս հատվածներում առկա բարձր պահանջարկով, ինչպես նաև մեծածախ առևտրում վերաարտահանման մարժայի մեծ դերով:

2024 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է *արտաքին ապրանքաշրջանառության* զգալի աճ՝ հիմնականում պայմանավորված վերաարտահանման բարձր ծավալներով: Այն կազմել է 18.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից կրկնակի ավելի: Արտահանումն աճել է 2.3 անգամ՝ կազմելով 7.9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 86.5%-ով՝ կազմելով 10.5 մլրդ ԱՄՆ դոլար: Ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը 2024 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է 14.1%-ով (պայմանավորված ներմուծման մեծ ծավալներով) և հասել շուրջ 2.6 մլրդ ԱՄՆ դոլարի:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2024 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.8%-ով և կազմել 279,023 դրամ: Աշխատավարձի աճը հիմնականում պայմանավորված է մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, մշակող արդյունաբերության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, շինարարության, ինչպես նաև կազմակերպության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում աշխատավարձերի աճով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 211,319 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 10.0%-ով ավելի, իսկ ոչ պետականում՝ 306,316 դրամ՝ 5.6%-ով ավելի:

2024 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում գնաճը գտնվել է բացասական տիրույթում, իսկ հետագա երկու ամիսներին արձանագրվել է դրական, սակայն ԿԲ թիրախային միջակայքից զգալիորեն ցածր գնաճ: Հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.8%, այնուամենայնիվ, կիսամյակի գնաճը շարունակում է մնալ բացասական՝ -0.6%:

ՀՀ կենտրոնական բանկը 2024թ. առաջին կիսամյակում շարունակել է դրամավարկային պայմանների մեղմացման քաղաքականությունը և չորս անգամ՝ ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով, նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Այս քաղաքականությունը շարունակվում է նաև երկրորդ կիսամյակում՝ մասնավորապես, ԿԲ-ն հուլիսին այն նվազեցրել է ևս 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 7.75%: Ակնկալվում է, որ այս քաղաքականության ուղղության պահպանումը պետք է հանգեցնի գնաճի որոշակի արագացմանը, որը, սակայն, ըստ ԿԲ կանխատեսումների, մինչև տարեվերջ կմնա ԿԲ թիրախից ցածր մակարդակում:

Ֆիզիկական անձանց՝ դեպի ՀՀ փոխանցումները նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ զգալիորեն նվազել են: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով այլ երկրներից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքը 2024 թվականի առաջին կիսամյակի դրությամբ կազմել է 595.4 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 33.7%-ով պակաս: ՌԴ-ից զուտ ներհոսքը նվազել է 25.2%-ով՝ հիմնականում պայմանավորված փոխանցումների ներհոսքի կրճատմամբ:

Այսպիսով, մանրամասնությունների մեջ չխորանալու դեպքում, ՀՀ տնտեսական աճի առումով տպավորությունը բավական դրական է ստացվում, սակայն այդ մանրամասների նույնիսկ ոչ խորքային ուսումնասիրությունը վերհանում է տնտեսությունում ինչպես փաստացի արդեն իսկ առկա, այնպես էլ մոտ ապագայում հնարավոր մի շարք լրջագույն խնդիրներ: Նախկինում բազմիցս զգուշացրել էինք¹, որ, քանի որ 2024թ. առաջին ամիսներին տնտեսական աճը հիմնականում մի ենթաճյուղի (ոսկերչական գործունեության) ցուցանիշների կտրուկ ավելացման արդյունք է՝

¹ Ստորև ներկայացվում է «Լույս» հիմնադրամի՝ նշված հիմնախնդրին անդրադարձող հրապարակումների ոչ ամբողջական ցանկը:

1. «ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2024 թվականի հունվար-մայիս ամիսներին»՝ <https://www.luys.am/.../SU3-1-5.pdf>
2. «ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2024 թվականի հունվար-հունիս ամիսներին»՝ <https://www.luys.am/.../SU3-1-6.pdf>
3. «2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ»՝ <https://www.luys.am/.../.pdf>:

պայմանավորված արտաժին անկայուն գործոններով, ապա այդ գործոնների ազդեցության չեզոքացման կամ թուլացման պարագայում ՀՀ տնտեսությունը կբախվի չափազանց բարդ խնդիրների հետ: Ցավոք, այդ մտավախությունը մասամբ արդեն իսկ իրականություն է դարձել՝ այդ արտաժին գործոնների ազդեցության կտրուկ թուլացման արդյունքում ոսկերչական գործունեության աճը, դրա արդյունքում՝ նաև ՀՀ տնտեսական ակտիվությունը, կտրուկ դանդաղել են: Չնայած պաշտոնական վիճակագրությունը շարունակում է բարձր աճեր գրանցել, տնտեսության մի շարք կարևորագույն ոլորտներ անկում են ապրում: Ընդ որում, այս երևույթն արդեն մի քանի ամիս շարունակվում է: Ընդհանրապես, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած արտաժին դրական գործոնների ազդեցությամբ ՀՀ տնտեսությունն ավելի քան երկու տարի շարունակ ենթարկվում է «դեֆորմացիայի», ինչն ավելի մեծ թափ ստացավ վերջին ամիսներին՝ կապված ոսկերչական գործունեության ենթաճյուղի զարգացումների հետ: Արդեն իսկ պարզ է, որ նշված արտաժին գործոնների չեզոքացման շարունակման պարագայում տնտեսական աճի հետ կապված խնդիրներն առավել կխորանան:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի 2024 թվականի առաջին կիսամյակի ընդհանուր եկամուտները կազմել են 1,243.7 մլրդ դրամ (Աղյուսակ 1): 2023 թվականի առաջին կիսամյակի համեմատ, պետական բյուջեի եկամուտներն աճել են 7.2%-ով կամ 83 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով:

Ի դեպ, բյուջեի ընդհանուր եկամուտների ցուցանիշի հաշվարկում կատարվել է մեթոդաբանական փոփոխություն, որի համաձայն՝ 2024-ից սկսած դրանում ներառվում է նաև հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների գումարի վերադարձը (նախկինում այն նվազեցվում էր հարկային եկամուտներից):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը դանդաղել է՝ պայմանավորված հարկային եկամուտների և պետական տուրքերի աճի ավելի քան քառակի դանդաղմամբ: Այսպես, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համադրելի² ցուցանիշի համեմատ աճը կազմել է 5.0%, իսկ հաշվառման նախկին մոտեցումը կիրառելու (2024թ. առաջին կիսամյակի

² Քանի որ 2024թ. պետական բյուջեի եկամուտների կազմում ներառված է նաև հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ 32.1 մլրդ դրամ, 2023թ. առաջին կիսամյակի փաստացի մեծությանն ավելացվել է նշված ցուցանիշի՝ այդ ժամանակահատվածի փաստացի մեծությունը՝ 24.0 մլրդ դրամ:

բյուջեի եկամուտները հիպոթեքի վերադարձված տոկոսագումարների չափով նվազեցնելու) դեպքում եկամուտների աճը կկազմի 4.4% (2023թ. առաջին կիսամյակում այդ տեմպը 18.1% էր):

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,160.7	1,350.8	1,352.0	1,243.7*)	92.0
<i>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</i>	<i>1,103.5</i>	<i>1,304.2</i>	<i>1,305.0</i>	<i>1,187.6*)</i>	<i>91.0</i>
<i>Պաշտոնական դրամաշնորհներ</i>	<i>4.1</i>	<i>5.7</i>	<i>6.0</i>	<i>4.2</i>	<i>70.4</i>
<i>Այլ եկամուտներ</i>	<i>53.1</i>	<i>40.9</i>	<i>41.0</i>	<i>51.9</i>	<i>126.4</i>

*) Առանց հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը պակասեցնելու:

Բյուջեի ընդհանուր եկամուտների 99.7%-ը՝ 1,239.5 մլրդ դրամը, գոյացել է ներքին աղբյուրներից, իսկ պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվել է 4.2 մլրդ դրամ:

Ի դեպ, չնայած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճին, **2024թ. առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ բյուջեի եկամուտները թերակատարվել են 8.0%-ով՝ 108.3 մլրդ դրամով**: Ընդ որում, թերակատարում արձանագրվել է ինչպես ներքին աղբյուրներից, այնպես էլ պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվող եկամուտների գծով՝ համապատասխանաբար 7.9%-ով (106.5 մլրդ դրամով) և 29.6%-ով (1.8 մլրդ դրամով):

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1,187.6 մլրդ դրամ (Աղյուսակ 2): Ճշտված պլանով ծրագրված մեծության՝ 1,305.0 մլրդ դրամի համեմատ թերակատարումը 9.0% է: Քանի որ նոր մեթոդաբանությամբ այս ցուցանիշը ևս ներկայացված է առանց հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը պակասեցնելու, հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը հաշվարկելու համար նույնպես դիտարկվել է 2023-ի համադրելի ցուցանիշը³: Ըստ այդմ, նախորդ

³ Այս դեպքում ևս 2023թ. առաջին կիսամյակի փաստացի մեծությանն ավելացվել է հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի՝ այդ ժամանակահատվածի փաստացի մեծությունը:

տարվա նույն ժամանակահատվածի համադրելի ցուցանիշի համեմատ աճը կազմում է 5.3%: Իսկ հաշվառման նախկին մոտեցումը կիրառելու դեպքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմում է 4.7% կամ 52 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորված է «բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարի», եկամտային հարկի և շահութահարկի գծով մուտքերի աճով՝ համապատասխանաբար՝ 2.2 անգամ, 6.8%-ով և 4.4%-ով:

2024թ. հունվար-հունիս ամիսների 10.4% կուտակային ՏԱՑ-ի պարագայում հարկային եկամուտների կրկնակի ցածր աճի տեմպը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ դա, թերևս, ՀՀ տնտեսությունում առկա բացասական երևույթների հետևանք է:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, մլրդ դրամ

	2023թ. առաջին կիսամյակի փաստացի	2024թ. առաջին կիսամյակի փաստացի	2024թ. առաջին կիսամյակը 2023թ. առաջին կիսամյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,103.5	1,187.6	107.6
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,075.3	1,154.6	107.4
ԱԱՀ	345.6	328.7	95.1
Ակցիզային հարկ	61.5	55.5	90.3
Շահութահարկ	235.6	245.9	104.4
Մաքսատուրք	35.4	36.1	101.9
Եկամտային հարկ	270.2	320.6	118.6
Շրջանառության հարկ	24.3	28.3	116.6
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	43.7	50.7	115.9
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	22.9	49.6	216.3
Այլ հարկեր	36.0	39.1	108.6
2. Պետական տուրք	28.2	33.1	117.4

Ավելացված արժեքի հարկը տեսակարար կշռով ամենամեծն է հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ՝ 27.7%: Այն, սակայն, բացարձակ մեծությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է՝ 4.9%-ով կամ 16.9 մլրդ դրամով: ԱԱՀ-ի գծով մուտքերի նվազումը պայմանավորված է ներմուծվող ապրանքներից ստացված մուտքերի 25.4% նվազմամբ: ՀՀ-ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառությունից ստացված մուտքերը, ընդհակառակը, աճել են՝ հակազդելով ԱԱՀ-ի գծով ընդհանուր մուտքերի նվազմանը:

Եկամտային հարկը հարկային եկամուտների մեջ հաջորդ մեծ տեսակարար կշիռ ունեցող եկամտատեսակն է՝ 27.0% տեսակարար կշռով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտային հարկի աճը՝ հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի գումարները հանելուց հետո կազմում է 6.8% կամ 18.3 մլրդ դրամ:

Հարկային եկամուտների մեջ տեսակարար կշռով երրորդը *շահութահարկն* է՝ 20.7% արժեքով: Շահութահարկի բացարձակ մեծությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.4%-ով:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն նաև *ակցիզային հարկը, սոցիալական վճարը* և *«բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարը»*՝ համապատասխանաբար 4.7%, 4.3% և 4.2%: Ակցիզային հարկի գծով մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 9.7%-ով՝ պայմանավորված ներմուծվող ենթակապիտալի ապրանքների գծով մուտքերի 35.7%-ով նվազմամբ: Սոցիալական վճարի 15.9% աճը հիմնականում պայմանավորված է մասնակիցների թվի աճով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերի 2.2 անգամ աճը հիմնականում պայմանավորված է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի 2.8 անգամ (շուրջ 27 մլրդ դրամ) աճով: Միևնույն ժամանակ, ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձված բնապահպանական հարկի գծով ստացված մուտքերում արձանագրվել է 14.9% (600.6 մլն դրամ) նվազում:

Պետական տուրքերի գծով մուտքերը 2024 թվականի առաջին կիսամյակում կազմել են 33.1 մլրդ դրամ:

2024 թվականի առաջին կիսամյակում պաշտոնական դրամաշնորհների գծով բյուջեի մուտքերը կազմել են 4.2 մլրդ դրամ կամ ճշտված պլանի 6.0 մլրդ դրամ մեծությունից 29.6%-ով պակաս: Ընդ որում, թերակատարման տոկոսն ավելի բարձր՝ 67.9%, կլինի, եթե դիտարկվի ոչ թե պաշտոնական դրամաշնորհների ընդհանուր մեծությունը, այլ դրա երկու բաղադրիչներից միայն մեկը՝ նպատակային դրամաշնորհները, քանի որ մյուս բաղադրիչի՝ բյուջետային աջակցության դրամաշնորհների գծով ստացվել է շուրջ 2.3 մլրդ դրամ, որը ճշտված պլանով նախատեսված չի եղել: **Նպատակային դրամաշնորհների գծով ցածր կատարողականը ևս մեկ անգամ փաստում է, որ կառավարությանն այդպես էլ**

չի հաջողվում փոխել իրականացվող նպատակային ծրագրերի ցածր կատարողականի «տխուր ավանդույթը»:

2024թ. առաջին կիսամյակում բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 51.9 մլրդ դրամ: Այդ գումարի հիմնական մասը կազմում են բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարները՝ 18.3 մլրդ դրամ, իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 12.9 մլրդ դրամ, ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները՝ 11.4 մլրդ դրամ և պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները՝ 5.7 մլրդ դրամ: Բյուջեի այլ եկամուտների 2024թ. առաջին կիսամյակի մեծությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից պակաս է 2.3%-ով կամ 1.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների և պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտների նվազմամբ:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի փաստացի մեծությունը 2024 թվականի առաջին կիսամյակում կազմել է 1,232.7 մլրդ դրամ: Դրանք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 20.1%-ով կամ 206.3 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա հետ համադրելի ցուցանիշի աճը կազմում է 17% (174.3 մլրդ դրամ): Աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների և կենսաթոշակների, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ինչպես նաև տոկոսավճարների գծով ծախսերի աճով:

Արձանագրվել է փաստացի ծախսերի՝ ճշտված պլանի նկատմամբ զգալի թերակատարում՝ 12.5%-ով (175.8 մլրդ դրամով): Ի դեպ, ի սկզբանե 2024թ. պետական բյուջեով ծրագրված էին 1,362.7 մլրդ դրամի ընդհանուր ծախսեր, իսկ հետագայում դրանք 45.8 մլրդ դրամով ավելացվել են, սակայն փաստացի ծախսերն էապես՝ 130.0 մլրդ դրամով, զիջել են նույնիսկ սկզբնապես ծրագրվածին:

Թերակատարում է արձանագրվել թե՛ ընթացիկ, թե՛ կապիտալ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 9.7% և 26.0%: Թերակատարման 66.1%-ը՝ ընթացիկ ծախսերի, իսկ 33.9%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,026.4	1,362.7	1,408.5	1,232.7	87.5
<i>Ընթացիկ ծախսեր</i>	<i>911.9</i>	<i>1,210.8</i>	<i>1,194.0</i>	<i>1,077.9</i>	<i>90.3</i>
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	<i>114.5</i>	<i>151.9</i>	<i>214.4</i>	<i>154.9</i>	<i>72.2</i>

Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 97.9%-ը կամ 1,207.1 մլրդ դրամը, որոնց կիսամյակային ծրագիրը կատարվել է 88.5%-ով: Բյուջեի ծախսերի 2.1%-ը՝ 25.7 մլրդ դրամը, ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որի կատարողականը կազմել է 58.2%:

2024թ. առաջին կիսամյակում ընթացիկ ծախսերը կազմել են 1,077.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերի 18.2%-ով (166.0 մլրդ դրամով) աճը հիմնականում պայմանավորված է սոցիալական նպաստների և կենսաթոշակների, տոկոսավճարների, սուբսիդիաների և աշխատավարձին ուղղվող ծախսերի աճով: Միևնույն ժամանակ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 47.0%-ով (36.6 մլրդ դրամով):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի աճը (158.1 մլրդ դրամ) մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ 2024 թվականին հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների գումարի վերադարձը, որը նախկինում նվազեցվում էր եկամտային հարկից, ներառվել է պետական բյուջեի ծախսերում: Աճն առանց այդ գումարների կազմում է 38.8% (126.0 մլրդ դրամ)՝ հիմնականում պայմանավորված Արցախից բռնի տեղահանվածներին նպաստների ու կենսաթոշակային համակարգերում ընդգրկելու արդյունքում շահառուների թվի աճով և նրանց աջակցության տրամադրմամբ:

Պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների աճը հիմնականում պայմանավորված է հաշվետու ժամանակահատվածում հանրակրթության ոլորտում, ինչպես նաև տնտեսության արդիականացման և ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով իրականացվող սուբսիդավորման ավելացմամբ:

Ի տարբերություն ընդհանուր ծախսերի, ընթացիկ ծախսերի պլանավորվող մեծությունը ճշտված պլանով նվազեցվել էր, սակայն փաստացի մեծությունը զգալիորեն զիջել է ինչպես ճշտված, այնպես էլ հաստատված պլանի մեծությանը:

Ի դեպ, ինչպես և նախորդ մի քանի հաշվետու ժամանակահատվածներում, **թերակատարվել են ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչները:** Առավել շոշափելի են «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «դրամաշնորհներ» և «այլ ծախսեր» հոդվածների գծով ծախսերի թերակատարումները՝ ճշտված պլանի համեմատ համապատասխանաբար 24.1%-ով, 16.3%-ով և 12.9%-ով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,026.4	1,362.7	1,408.5	1,232.7	87.5
Ընթացիկ ծախսեր	911.9	1,210.8	1,194.0	1,077.9	90.3
Աշխատանքի վարձավորություն	90.1	109.4	110.6	103.4	93.5
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	77.9	85.0	54.5	41.3	75.9
Տոկոսավճարներ	116.5	167.6	167.4	153.5	91.7
Սուբսիդիաներ	69.0	88.7	87.2	82.0	94.1
Դրամաշնորհներ	120.9	143.7	151.8	127.0	83.7
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	325.1	464.9	522.1	483.1	92.5
Այլ ծախսեր	112.4	151.6	100.5	87.5	87.1
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	114.5	151.9	214.4	154.9	72.2
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	116.9	158.6	221.2	163.7	74.0
Շենքեր և շինություններ	105.1	128.8	187.8	149.7	79.7
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	9.8	21.7	24.9	12.2	49.2
Այլ հիմնական միջոցներ	2.0	8.1	8.4	1.8	21.3
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(2.4)	(6.8)	(6.8)	(8.9)	131.2

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշի 35.3%-ով (40.4 մլրդ դրամով) աճը պայմանավորված է կապիտալ ծախսերի ավելացմամբ, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների և ճանապարհային ցանցի բարելավման ծախսերի աճով, ինչպես նաև օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպման և իրականացման նպատակով միջոցների հատկացմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) 2024թ. առաջին կիսամյակում կազմել են 163.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 40.0%-ով: Այնուամենայնիվ, **դրանք և ճշտված պլանի համեմատ զգալիորեն՝ 26.0%-ով, թերակատարվել են: Ընդ որում, թերակատարումը վերաբերում է կապիտալ ծախսերի բոլոր բաղադրիչներին:**

Ուշագրավ է, որ ծախսային ուղղությունների զգալի մասի դեպքում փաստացի և պլանային մեծությունների միջև շեղումը ճշտված պլանի համեմատ ավելի մեծ է, քան հաստատված պլանի համեմատ: Այսինքն՝ ստացվում է, որ շատ դեպքերում, ճշտված պլանով փոխանակ ծրագրված ցուցանիշն իրականությանը «մոտեցվելու», ավելի է «հեռացվել», ինչը վկայում է բյուջետային պլանավորման հմտությունների անբավարար մակարդակի մասին:

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

ՀՀ 2024թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ առաջին կիսամյակում նախատեսվել էր 165 ծրագրերի իրականացում՝ 47 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Կատարված ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը դարձել է 168, որոնցից առաջին կիսամյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 161-ի գծով:

Ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում նախատեսված 878 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 756-ը կամ 86.1%-ը:

2024թ. պետական բյուջեի ծախսերի՝ առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ 12.5% (175.7 մլրդ դրամ) ընդհանուր շեղումը մեծ չափով պայմանավորված է եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (41.4 մլրդ

դրամ), տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (28.4 մլրդ դրամ), կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (27.5 մլրդ դրամ), էկոնոմիկայի (16.0 մլրդ դրամ), ֆինանսների (15.1 մլրդ դրամ) և պաշտպանության (11.0 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում արձանագրված շեղումներով: **Ի դեպ, ծախսերի թերակատարում է արձանագրվել հաշվետվությունում նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով իրականացվող ծրագրերի շրջանակներում:**

Տոկոսային արտահայտությամբ առավել զգալի են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (թերակատարումը՝ 65.2%), վիճակագրական կոմիտեի (թերակատարումը՝ 43.0%), արտաքին հետախուզության ծառայության (թերակատարումը՝ 41.0%) և էկոնոմիկայի նախարարության (թերակատարումը՝ 36.6%) պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով թերակատարումները:

Ստորև ներկայացվում են տվյալներ իրականացված որոշ ծրագրերի կատարման վերաբերյալ.

Աղյուսակ 5. 2024թ. առաջին կիսամյակում իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2024թ. առաջին կիսամյակի պլան	2024թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	2024թ. առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	Աշխատանքի սոցիալական հարցերի նախարարություն	854.0	932.2	202.1	21.7
2.	Բնակարանային ապահովում		4,114.9	4,371.3	2,610.8	59.7
3.	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	Առողջապահության նախարարություն	2,444.4	2,460.1	1,383.6	56.2
4.	Արտաքին հետախուզություն	Արտաքին հետախուզության ծառայություն	2,169.9	2,223.1	1,311.9	59.0
5.	Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2,192.8	1,645.6	0.0	0.0
6.	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		3,000.0	3,000.0	16.8	0.6
7.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության		3,407.8	4,907.8	2,537.6	51.7

	Էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր					
8.	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն	4,040.4	3,724.6	113.9	3.1
9.	Գյուղատնտեսության խթանման ծրագիր		11,107.8	11,002.9	4,579.5	41.6
10.	Զբոսաշրջության զարգացման ծրագիր		4,706.1	4,706.1	2,354.8	50.0
11.	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	ԿԳՄՍ նախարարություն	21,130.2	20,307.5	4,943.3	24.3
12.	Ապահով դպրոց		551.2	1,200.2	446.8	37.2
13.	Ռազմաթշկական սպասարկում և առողջապահական ծառայություններ	Պաշտպանության նախարարություն	784.8	794.0	74.5	9.4
14.	Կոշտ թափոնների կառավարում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	478.0	478.0	11.2	2.3
15.	Քաղաքային զարգացում		8,724.9	7,912.6	1,965.7	24.8
16.	Ոռոգման համակարգի առողջացում		10,237.2	8,456.9	5,696.3	67.4
17.	Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում	Քաղաքաշինության կոմիտե	1,573.0	1,567.1	475.9	30.4

Հարկ է նշել, որ գործող կառավարությունը ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր կա՛մ ընդհանրապես չի իրականացրել, կա՛մ դրանց կատարողականը շատ ցածր է: Այդպիսի ծրագրերից են, օրինակ, «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացումը», որն ընդհանրապես չի իրականացվել և «Թվային փոխակերպման գործընթացի իրականացումը», որը կատարվել է ընդամենը 0.6%-ով:

Այնպիսի տպավորություն է, որ նախորդ ժամանակաշրջանների սխալներից ու բացթողումներից դասեր քաղելը գործող իշխանությունն ընկալում է յուրովի: Մասնավորապես, փոխանակ բարելավելու ծրագրերի իրականացման գործընթացները՝ սկսած բյուջետային պլանավորումից, վերջացրած ծրագրերի իրականացման նկատմամբ ընթացիկ և ընդհանուր վերահսկումով, կառավարությունը գնացել է «կարճ» ճանապարհով՝ ծրագրերի իրականացման բոլոր թերակատարումների համար գտնել քիչ թե շատ «օբյեկտիվ» պատճառաբանություններ՝ հաստիքների թերհամալրում, եղանակային վատ պայմաններ, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Փաստացի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման պարագայում 2024 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 11.0 մլրդ դրամ հավելուրդ՝ ծրագրված 56.4 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 134.3 մլրդ դրամ հավելուրդի դիմաց: **Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 67.4 մլրդ դրամով:**

2024 թվականի առաջին կիսամյակում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է չափավոր ընդլայնող: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը՝ 2024 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 0.9 ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների 0.6 և ծախսերի 0.3 չափի ընդլայնող ազդեցություններով:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	(134.3)	11.9	56.4	(11.0)	(19.5)
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	(3.3)	60.0	104.1	46.2	44.4
1. Փոխառու զուտ միջոցներ	159.2	94.3	94.3	128.4	136.2
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	(162.5)	(34.3)	9.8	(82.2)	(836.8)
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	(131.0)	(48.1)	(47.7)	(57.2)	119.9
1. Փոխառու զուտ միջոցներ	(28.7)	(40.5)	(40.3)	(52.2)	129.4
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	(102.3)	(7.6)	(7.4)	(5.0)	67.6

Ներքին զուտ փոխառու միջոցները 2024թ. առաջին կիսամյակում կազմել են 128.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 19.3%-ով պակաս: Արտաքին փոխառու միջոցների գծով մարումներն այս անգամ ևս (ինչպես 2023թ. առաջին կիսամյակում) գերազանցել են մուտքերին, ինչի հաշվին արտաքին զուտ փոխառու միջոցների ծավալը բացասական է եղել՝ -52.2 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջեի պակասուրդը արտաքին աղբյուրներից փոխառու զուտ միջոցների հաշվին ֆինանսավորվել է արտաքին վարկատուների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի հաշվին:

Շարունակում է ցածր կատարողական գրանցվել նպատակային վարկերի գծով մուտքերի մասով, ինչը նպատակային (կապիտալ) ծրագրերի թերակատարման հետևանք է: Նպատակային վարկերի գծով մուտքերը 2024թ. առաջին կիսամյակում կազմել են 29.5 մլրդ դրամ կամ ճշտված պլանի ցուցանիշի (46.1 մլրդ դրամ) 64.0%-ը:

Կառավարության՝ բյուջետային պլանավորման ոլորտում առկա լուրջ խնդիրները դրսևորվել են նաև բյուջեի հաշվեկշռի մասով. հաստատված պլանով ծրագրվել է, որ պետական բյուջեն կունենա 11.9 մլրդ պակասուրդ: Այնուհետև, ճշտված պլանով ակնկալվող պակասուրդի չափն ավելացվել է մինչև 56.4 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի արձանագրվել է 11.0 մլրդ դրամի հավելուրդ:

ՀՀ պետական պարտքը 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 4,718.9 մլրդ դրամ (12.2 մլրդ ԱՄՆ դոլար), որից 2,424.4 մլրդ դրամը (6.3 մլրդ ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,294.6 մլրդ դրամը (5.9 մլրդ ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 9.5%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 10.0%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 10.3%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 10.8%-ով:

Կառավարության պարտքի սպասարկման ծախսերում շեղում է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պարտքի գծով:

Հաշվետվությունում նշվում է, որ 2023 թվականի հունվար-հունիս ամիսների համեմատ կառավարության պարտքի սպասարկման ծախսերն աճել են 31.7%-ով (37 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի, շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի ծավալների, ինչպես նաև արտաքին պարտքի գծով լողացող տոկոսադրույքների աճով:

Նկատի ունենալով ՀՀ դրամի արժևորումը՝ առավել նպատակահարմար է ներքին պարտքը դիտարկել դրամային, իսկ արտաքին պարտքը՝ դոլարային արտահայտությամբ: Այսպես, ներքին պարտքը դրամային արտահայտությամբ աճել է շուրջ 27.3%-ով, իսկ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ շարունակել է նվազել՝ շուրջ 2.6%-ով: Հունիսի վերջի դրությամբ ներքին պարտքի կշիռը կառավարության պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 50.7%:

Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազմանը զուգահեռ, նվազում է նաև պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը): Այսպես, պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը 2024թ. հունիսին կազմել է 9.1%՝ նախորդ տարվա հունիսի համեմատ նվազելով 2.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես նվազել է՝ կազմելով 9.8% և նախորդ տարվա հունիսի համեմատ նվազելով 1.3 տոկոսային կետով:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերլուծությունը՝ արձանագրենք.

- ՀՀ տնտեսության վրա ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ի հայտ եկած արտաժին բարենպաստ գործոնների շնորհիվ 2024թ. առաջին կիսամյակում գրանցվել է տնտեսական ակտիվության 10.4% ցուցանիշ: **Առաջին հայացքից կարող է թվալ, որ տնտեսական աճի առումով ՀՀ-ում վիճակը բավական բարենպաստ է, սակայն փոքր-ինչ խորքային ուսումնասիրության դեպքում բացահայտվում են տնտեսությունում ինչպես փաստացի առկա, այնպես էլ մոտ ապագայում հնարավոր մի շարք լրջագույն խնդիրներ:** Մասնավորապես, վիճակագրական տվյալները վկայում են, որ վերոհիշյալ բարենպաստ գործոնների ազդեցությունը գնալով թուլանում է: Պատահական չէ, որ ապրիլից արձանագրվում է մշակող արդյունաբերության (առաջին կիսամյակի բարձր տնտեսական ակտիվության «լոկոմոտիվի»՝ ոսկերչական գործունեության ծավալների մասով) աճի կտրուկ դանդաղում, ինչի հետևանքով 2024թ. երկրորդ եռամսյակում յուրաքանչյուր ամիս արձանագրվել է մշակող արդյունաբերության կուտակային աճի՝ նախորդ ամսվա ցուցանիշից զգալիորեն ավելի ցածր մակարդակ: **Ավելին, այդ աճին զուգընթաց ՀՀ տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք ենթաճյուղերում (օրինակ՝ սննդամթերքի, հագուստի, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն և այլն) ամիսներ շարունակ անկում է արձանագրվում:** Այսինքն՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճը (թեև ամսեամիս զգալիորեն դանդաղող, սակայն դեռևս համեմատաբար բարձր) կարողացել է «չեզոքացնել» այդ անկման ազդեցությունը՝ «քողարկելով» արդյունաբերության կառուցվածքի վատթարացման միտումները: Ընդհանրապես, ՀՀ տնտեսության՝ դեռևս ռուս-ուկրաինական հակամարտության սկզբում, արտաժին գործոնների ազդեցությամբ, սկսված «դեֆորմացիան» նոր թափ է ստացել վերջին ամիսներին՝ պայմանավորված ոսկերչական գործունեության ենթաճյուղի զարգացումներով, սակայն, արդեն իսկ պարզ է, որ նշված արտաժին գործոնների չեզոքացման շարունակման պարագայում տնտեսությունը կբախվի լրջագույն խնդիրների հետ:

• 2024թ. առաջին կիսամյակում բյուջեի եկամուտների աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի քան եռակի պակաս է՝ պայմանավորված հարկային եկամուտների և պետական տուրքերի աճի ավելի քան քառակի դանդաղմամբ: ՀՀ պետական բյուջեի 2024 թվականի առաջին կիսամյակի ընդհանուր եկամուտները կազմել են 1,243.7 մլրդ դրամ և ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 8.0%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 1,187.6 մլրդ դրամ և ճշտված պլանի համեմատ նույնպես թերակատարվել են՝ 9.0%-ով:

• ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2024 թվականի առաջին կիսամյակում կազմել են 1,232.7 մլրդ դրամ՝ կամ ճշտված պլանի ցուցանիշից 12.5%-ով պակաս: Թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը: Թերակատարում է արձանագրվել հաշվետվությունում նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով իրականացվող ծրագրերի շրջանակներում: Տոկոսային արտահայտությամբ առավել զգալի են բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, վիճակագրական կոմիտեի, արտաքին հետախուզության ծառայության և էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով թերակատարումները:

• 2024 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 11.0 մլրդ դրամի հավելուրդ, մինչդեռ ծրագրված էր ունենալ 56.4 մլրդ դրամի պակասուրդ: Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 67.4 մլրդ դրամով:

Ուշագրավ է, որ բյուջեի՝ թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի և թե՛ պակասուրդի առումով շատ հաճախ փաստացի և պլանային մեծությունների միջև շեղումը ճշտված պլանի նկատմամբ ավելի մեծ է, քան հաստատված պլանի նկատմամբ: Այսինքն՝ շատ դեպքերում, ճշգրտման արդյունքում փոխանակ ծրագրված ցուցանիշներն ավելի իրատեսական դառնային, դրանց զգալի մասն ավելի է «հեռացել» իրականությունից: Իսկ դա վկայում է այն մասին, որ կառավարությանը դեռևս չի հաջողվում լուծել բյուջետային պլանավորման հմտությունների անբավարար մակարդակի հիմնախնդիրը: Դրա փոխարեն ծրագրերի իրականացման բոլոր թերակատարումների համար հաշվետվությունում բերվել են զանազան «օբյեկտիվ» հիմնավորումներ՝ հաստիքների թերհամալրում, եղանակային վատ պայմաններ, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն:

Բյուջեի ծրագրային դասակարգմամբ ծախսերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գործող կառավարությունը ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր կա՛մ ընդհանրապես չի իրականացրել, կա՛մ դրանց կատարողականները շատ ցածր են: Այդպիսի ծրագրերից են, օրինակ, «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացումը», որն ընդհանրապես չի իրականացվել և «Թվային փոխակերպման գործընթացի իրականացումը», որը կատարվել է ընդամենը 0.6%-ով:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ 2024թ. առաջին կիսամյակում թերակատարվել են պետական բյուջեի թե՛ եկամուտները և թե՛ ծախսերը: Բյուջեի ծախսերի թերակատարումը նաև պայմանավորված է եկամուտների թերակատարմամբ: Առաջին կիսամյակի միտումների պահպանման պարագայում տարեկան կտրվածքով կվտանգվի 2024թ. պետական բյուջեի կատարումը, և չի բացառվում նաև, որ կհանգեցնի բյուջեի սեկվեստրի: Ավելին, հարկային եկամուտների՝ տնտեսական ակտիվության կուտակային ցուցանիշից կրկնակի ցածր աճի տեմպը, թերևս, վկայում է ՀՀ տնտեսությունում առկա լրջագույն խնդիրների մասին: Մինչդեռ, բացի այն, որ «կաղում է» հարկային վարչարարությունը, պատկան մարմիններում շարունակում է չլուծված մնալ նաև պետական կառավարման համակարգում տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող ծրագրերի արդյունավետ իրականացման կարողությունների ապահովման հիմնախնդիրը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: